Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

1919 հունվար 9 Թիֆլիսում Անտանտի զինվորական գործիչների ղեկավարությամբ բացվում է դաշնակցական և մենշևիկյան կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որի որոշմամբ Լոռին հայտարարվում է «Չեզոք գոտի»:

հունվար 20 Ծնվեց հայ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը:

ապրիլ 20 Երևանում ձևավորվում է երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպությունը:

օգոստոս 1 Երևանում բացվում է Հայաստանի խորհրդարանը:

սեպտեմբեր 9 Երևանում տեղի է ունենում Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների ապօրենի խորհրդակցություն, որն ընտրում է ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե՝ Արմենկոմ:

սեպտեմբեր 30 Ծնվեց հայ բանաստեղծ Գևորգ Էմինը: (Վախճ. 1998թ.-ին):

դեկտեմբեր 14 Ռեզունլարում բոլշևիկների նախաձեռնությամբ հրավիրվում է Լոռվա «չեզոք գոտու» գյուղացիական դեպուտատների խորհրդի առաջին նիստը, որը բանաձև է ընդունում կալվածատիրությունը վերացնելու և հողային կոմիտեներ ստեղծելու մասին:

1920 հունվար 7 Օրենբուրգում վախճանվեց հայ ականավոր բանաստեղծ և պետական գործիչ Վահան Տերյանը: (Ծնվ. 1885թ.-ին):

հունվար 19 Երևանում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսը:

հունվար 20 Լույս է տեսնում «Լոռվա գյուղացիության ձայնը» բոլշևիկյան թերթը:

մարտ 3 Նոր Նախիջևանում լույս է տեսնում բոլշևիկյան «Բանվորի կռիվը» թերթը հայերեն:

ապրիլ 13 Սկսվեց Դրոյի 45-օրյա ղարաբաղյան ռազմարշավը:

ապրիլ 26 Հայ գրող Վրթանես Փափազյանի մահը Երևանում: (Ծնվ. 1866թ.-ին):

ապրիլ 28 Խորհրդային կարգերի հաստատումը Ադրբեջանում:

մայիս 5 Ընկնում է Խատիսյանի կառավարությունը, կազմվում է արտակարգ լիազորություններով նոր կառավարություն Հ. Օհանջանյանի նախագահությամբ:

մայիս 10 Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն Ալեքսանդրապոլում, ինչպես նաև ամբողջ Հայաստանում, հայտարարեց խորհրդային իշխանություն:

մայիս 18 Բաքվում լույս է տեսնում «Կոմունիստ» օրաթերթը հայերեն:

մայիս 21 Դիլիջանում հաստատվում է խորհրդային իշխանություն:

մայիս 21 Թարթառ-Մարտակերտ ուղղությամբ 11-րդ կարմիր բանակը ներխուժեց Ղարաբաղ, որով դրվեց Ադրբեջանին հայկական այդ երկրամասի փաստական բռնակցման սկիզբը:

մայիս 31 Մոսկվայում սկսվում են դաշնակցության պատվիրակության բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի հետ:

հունիս 11 ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպությունները ձևավորվում են որպես Հայաստանի համայնավար (բոլշևիկների) կուսակցություն: Ստեղծվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմ և նրա արտասահմանյան բյուրո:

օգոստոս 10 Սևր քաղաքում (Փարիզի մոտ) դաշնակիցների և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև կնքվում է դաշնագիր, որի 6-րդ հատվածի 88-91 հոդվածները վերաբերում են Հայաստանին: Նախագահ Ուիլսոնը որոշում է Արևմտյան Հայաստանի արևմտյան սահմանները: Թուրքիան ճանաչում է Հայաստանը: Պայմանագիրը վավերացված չէր և Թուրքիան վերսկսում է Արևմտյան Հայաստանի հայերի կոտորածը:

օգոստոս 10 ՌՍՖՍՀ լիազորներկայացուցիչ Բ.Լեգրանը Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ կնքում է համաձայնագիր:

սեպտեմբեր 1 Բաքվում բացվում է Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, որին մասնակցում են նաև Հայաստանի աշխատավորության ներկայացուցիչները:

սեպտեմբեր 10 Բաքվում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ժողովը:

սեպտեմբեր 22 Սկսվում է թուրքական բանակի հարձակումը Արևելյան Հայաստանի վրա:

սեպտեմբեր 27 Լուծարքի ենթարկվեց Ֆրանսիայի կառավարության որոշմամբ կոտորածներից ազատված հայ տարագիրներից կազմված կամավորական Արևելյան Լեգիոնը, որը կռվելու էր Թուրքիայի դեմ և դառնալու էր ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում:

սեպտեմբեր 29 Թուրքերը գրավում են Սարիղամիշը:

հոկտեմբեր 11 Դաշնակցական կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով Երևան է ժամանում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունը Բ. Լեգրանի գլխավորությամբ:

(Շարունակելի)

Լուրեր

ՀՀ Նախագահի ուղերձը հանրաքվեի կապակցությամբ

ԵՐԵՎԱՆ - Նախագահ Ռոբերտ Քոչարյանն այսօր շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ Սահմանադրության մեջ համաժողովրդական հանրաքվեով փոփոխություն կատարելու մասին որոշման կապակցությամբ: Ուղերձում ասված է. «Սիրելի՛ հայրենակիցներ, Շնորհավորում եմ բոլորիս՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին հանրաքվեի ընթացքում միանշանակ եւ վճռական «Այո» ասելու կապակցությամբ: Սա մի մեծ հաղթանակ է Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման եւ քաղաքացիական հասարակության ձեւավորման խնդրում:

Շնորհակալություն եմ հայտնում մեր այն քաղաքացիներին, որոնք անտարբեր չգտնվեցին երկրի ապագայի նկատմամբ եւ ակտիվ մասնակցեցին հանրաքվեին: Կարծում եմ, որ այս հանրաքվեում չեն կարող հաղթողներ եւ պարտվողներ լինել: Սահմանադրությունը բոլորինս է, եւ այժմ ժամանակն է աշխատել միասին՝ սահմանադրական դրույթները կյանքի կոչող իրավական ակտերի մշակման եւ ընդունման համար:

Կրկին շնորհավորում եմ մեր ողջ ժողովրդին բարեփոխված Սահմանադրություն ունենալու կապակցությամբ: Ժողովրդի «Այո»-ն վկայեց երկրում բարեփոխումներն ավելի խորացնելու հասարակական պահանջի առկայության մասին: Բարեփոխված Սահմանադրությունը հարթում է Հայաստանը 21-րդ դարի ծաղկուն երկիր դարձնելու ուղին»:

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆՆԵՐԻՑ ԱՄԵՆԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԸ. ՀԱՆԳԱՆԱԿՎԵՑ 7,7 ՄԼՆ ԴՈԼԱՐ

Ամենամեծ ներդրումները. Լուիզ Սիմոն Մանուկյան՝1 մլն, Արա Աբրահամյան՝ 250 հազար դոլար

Հեռուստամարաթոն-2005»-ը կարելի է համարել ամենահաջողվածներից: Եթե նախկին տարիներին համահայկական դրամահավաքի ելքը վճռում էին սփյուռքում բնակվող մեր անհատ բարերարները, ապա այս անգամ 7,7 մլն դոլարի նվիրատվությունն ու նվիրատվության խոստումն ապահովվեց գլխավորապես ժողովրդական մասնակցությամբ:

Այս հեռուստամարաթոնին միայն երկու խոշոր նվիրատվություն է եղել. Լուիզ Սիմոն Մանուկյանը տրամադրել է 1 մլն դոլար, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը՝ 250 հազար:

Այս հեռուստամարաթոնի մյուս կարեւոր եւ հաճելի առանձնահատկությունը Հայաստանի եւ Ղարաբաղի ակտիվ մասնակցությունն էր: Ինչպես սփյուռքում, այնպես էլ Հայաստանում եւ Ղարաբաղում եւս արմատավորվում է դրամ հանգանակելու մշակույթը: «Հեռուստամարաթոն-2005»-ի ընթացքում Հայաստանի եւ Ղարաբաղի ներդրումը Մարտակերտի շրջանի վերականգնման գործում կազմեց 1,2 մլն դոլար: Մոտավորապես այդքան գումար է հանգանակվել նաեւ եվրոպահայ գաղութներում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Պորտուգալիա, Իսպանիա:

Քաղաքական եւ տնտեսական առումներով ոչ դյուրին ժամանակներ ապրող Լիբանանի հայ համայնքն ապահովեց 100 հազար դոլարի նվիրատվություն, Արգենտինան՝ ավելի քան 50 հազար, Մեծ Բրիտանիան՝ 31 հազար: Ինչպես նախորդ հեռուստամարաթոններին, այս անգամ էլ ամենաակտիվը եւ առատաձեռնն ամերիկահայ մեր հայրենակիցներն էին: Արժանի է նաեւ հիշատակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի քարոզչական լավ աշխատանքը, առանց որի դժվար կլիներ «Արցախի վերածնունդ» ծրագրի առաջին փուլի՝ Մարտակերտի շրջանի վերականգնման համար ապահովել 7,7 մլն դոլար:

Հեռուստամարաթոններ կազմակերպվում են 1995 թ.-ից: Ամենաբարձր ցուցանիշը եղել է 1996 թ.-ին, երբ հանգանակված 6 մլն դոլարին 6 մլն ավելացրեց մեր ժամանակների հայ ամենաառատաձեռն բարերարը՝ միշտ կենսուրախ Քըրք Քըրքորյանը: Անցյալ տարվա հեռուստամարաթոնն ապահովեց 11,5 մլն դոլար, ինչը եւ հնարավորություն է տալիս առաջիկա երկու տարիներին ավարտելու Արցախի ողնաշարը համարվող «Հյուսիս-հարավ» 160 կմ-անոց ավտոճանապարհը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի մարաթոններին հանգանակված գումարով էր, որ հնարավորություն ստեղծվեց կառուցելու Հայաստանն Արցախին կապող Գորիս-Ստեփանակերտ մայրուղին:

Հիշեցնենք, որ այս տարվա մայիսին հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում էր կայացրել ձեռնամուխ լինելու «Արցախի վերածնունդ» եռափուլ ծրագրին՝ վերականգնել, զարգացնել եւ վերաբնակեցնել Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի (պատերազմում ամենատուժած շրջանն է, 1992 թ. գարնանը եւ ամռանը գտնվել է ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ), ապա՝ Մարտունու եւ Հադրութի շրջանները: Առաջին փուլի համար, ըստ նախագծի, անհրաժեշտ է 12-13 մլն դոլար: Սակայն «Հեռուստամարաթոն-2005»-ին հանգանակված 7,7 մլն դոլարը բավարար կլինի Մարտակերտի ամենաառաջնային խնդիրները լուծելու համար՝ ջրամատակարարում, գյուղատնտեսություն, առողջապահություն:

Խ. Հայաստան-85

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՂՔԵՐ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Եթե Հայաստանի Առաջին հանրապետությունը, ինչպես բնորոշում է նրա պատմագիրներից Սիմոն Վրացյանը, ծնվեց քաոսից, ապա Երրորդ հանրապետությունը ստեղծվեց բավական ամուր կռվանների վրա: Միջազգայնորեն ճանաչված սահմաններ, պետականության ատրիբուտներ, օրենքներ, դատարան, իշխանություն կրող պետական մարմիններ՝ Գերագույն խորհրդի գլխավորությամբ, բավական զարգացած տնտեսություն, կենսագործունեության համար անհրաժեշտ ենթակառույցներ եւ, ամենից կարեւորը, զարգացած ու գիտակից ազգաբնակչություն՝ պատրաստ հօգուտ անկախության ինքնորոշվելու: Այս բոլորը հիմք հանդիսացան պետականության մի ձեւից՝ ոչ անկախ կամ կիսանկախ վիճակից սահուն անցում կատարելու դեպի մեկ այլ ձեւի՝ անկախ պետականության:

Սակայն շատերն են փորձում քամահրանքով խոսել Երկրորդ հանրապետության՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության մասին, որի ստեղծման 85-ամյակն է լրանում այսօր: Եվ կամ հիշում են միայն դժնի ու դժնդակ օրերն ու տարիներն այդ հանրապետության, շարունակելով 70 տարիների ընթացքում կոշտացած խորհրդային ավանդույթը՝ իրերն ու երեւույթները տեսնել միայն սեւ: Մեկ ուրիշ խումբ մարդկանց նվազող բազմություններ, շարունակում են այդ ավանդույթի մյուս թելադրանքը՝ ամեն ինչ տեսնել սպիտակների մեջ եւ ամեն տարի այս օրը կարոտաբաղձ եւ անցելապաշտ երթ կատարել դեպի Ստ. Շահումյանի եւ Ալ. Մյասնիկյանի արձանները:

Ավելի մեծ է թիվը բոլոր ժամանակների պատեհապաշտների, ովքեր խորհրդային տարիներին պաշտոն ու բարիքներ էին միայն վայելում, այսօր էլ վայելում են եւ վաղն էլ շարունակելու են վայելել՝ օգտվելով ե՛ւ այն, ե՛ւ այս կարգերից: Սրանց մի մասը 90-ական թթ. հանկարծ հիշեց, որ իր հայրը կամ պապը դաշնակցական է եղել, մյուս մասը ընտանիքի հին սնդուկներից «կապիտալիստական» հնոտիք մեջտեղ հանեց ու ցուցադրեց, իսկ առավել ճարպիկները սկսեցին «արեւմտյան արժեքներ» ուտել եւ վաճառել...

Իսկ պատմաբանն՞ը: Սրանք, ինչպես այն ժամանակ, այսօր էլ երդվել են առանց պատվերի ոչ մի տող չգրել: Իսկ, հասկանալի է, Խ. Հայաստանը պատվիրատու չունի այսօր: Ու շարունակվում է «կրտոնային» պատմագրությունը:

Քչերն են միայն, ու նրանց մեջ՝ բարեբախտաբար ոչ միայն մտավորականներ, այլեւ լուրջ արդյունաբերողներ, որոնք գիտակցում են Խ. Միության փլուզման տրամաբանությունը, ընդունում են Խ. Հայաստանի 70-ամյա դժվարին ուղու ե՛ւ ստվերը, ե՛ւ լույսը, ու փորձում են անկախ Հայաստանում՝ Երրորդ հանրապետությունում պահպանել բոլոր ժամանակներում ստեղծված ազգային, մարդկային եւ համամարդկային արժեքները:

«Ազգ» օրաթերթը, լինելով Հայաստանի Երրորդ եւ անկախ հանրապետության առաջին մունետիկներից մեկը, իրեն համարում է այս վերջին խմբի ներկայացուցիչ: Մենք գիտակցում ենք, որ պատմությունն ընդհատումներ, ճեղքեր չի հանդուրժում: Մենք տեր ենք մնում մեր անցյալին, ամբո՛ղջ անցյալին: Դա մեզ օգնում է ճիշտ ընկալելու ներկան, ավելի հստակ աչքերով, առանց բարդույթների նայելու դեպի ապագան:

ՄՈԹԹԱՔԻ. ԻՐԱՆԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄԵԿ ՀՈԳԻ ԵՆ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆՈՒՄ

Իրանի արտգործնախարարը իր ադրբեջանցի գործընկերոջ հետ Բաքվում ունեցած հանդիպումից հետո հայտարարել է, որ Ադրբեջանը եւ Իրանը մեկ հոգի են երկու մարմնում: Մանուչեր Մոթթաքին, ըստ «Մեդիամաքսի», ընդգծել է, որ նախարարի պաշտոնում իր առաջին պաշտոնական այցը կատարել է հենց «եղբայրական եւ բարեկամական Ադրբեջան»: Նա գոհունակություն է հայտնել «Ադրբեջանում անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքների կապակցությամբ»:

Փաստորեն Ռուսաստանից հետո Իրանը դառնում է երկրորդ հզոր պետությունը, որը գովաբանում է նոյեմբերի 6-ին Ադրբեջանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները, որոնք, Արեւմուտքի մեկնաբանությամբ, հիմնականում կեղծվել են: Հավելենք նաեւ, որ շաբաթ օրը Բաքվում տեղի է ունեցել ընդդիմության հերթական հանրահավաքը, որն ավարտվել է ծեծ ու ջարդով: Բաքվի ոստիկանությունը մահակներ, ջրցան մեքենաներ եւ արցունքաբեր գազ է օգտագործել ցուցարարների նկատմամբ, տասնյակ մարդիկ ստացել են մարմնական վնասվածքներ: Ադրբեջանում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դեսպանությունները դատապարտել են տեղի ունեցածը:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բառը համարվում է լեզվական հիմնական միավոր, որովհետեւ առաջին հերթին բառերի միջոցով ենք մենք ձեւավորում մեր մտքերը, արտահայտում մեզ ծանոթ իրողությունները: Ուստի բառերի ուսումնասիրությունը, լեզվական խնդիր լինելուց բացի, ինչ-որ չափով հոգեբանական, մշակութային, պատմական, կենցաղային եւ այլ իրողությունների ուսումնասիրություն է: Հայտնի է, որ լեզվի բառապաշարն արտացոլում է տվյալ լեզվով խոսող հանրության լեզվամտածողությունը, իսկ հայերենի բառապաշարն ունի մի առանձնահատկություն եւս: Պատմական եւ լեզվական հանգամանքների բերումով արդի հայերենն ունի գրական երկու ճյուղ՝ արեւելահայերեն եւ արեւմտահայերեն, ուստի բառապաշարի քննությունը վեր է հանում այն նմանություններն ու տարբերությունները, որոնք գոյություն ունեն մեր երկու գրականների միջեւ:

Հայտնի պատճառներով խորհրդային տարիներին արեւմտահայերենը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել, եւ լեզվական շատ հարցեր, որոնց

թվում նաեւ բառապաշարային յուրահատկությունները, խորությամբ չեն քննվել եւ գիտական պատշաճ մակարդակով չեն ներկայացվել: Իննսունական թվականներից սկսած, երբ ավելի սերտացան Հայաստան-սփյուռք կապերը, արեւմտահայերենի ուսումնասիրությունը լայն թափ առավ, եւ արդեն եղած ուսումնասիրություններին մի քանի տարում ավելացան մի շարք գիտական հրապարակումներ ու մենագրություններ: Երեւանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր Ռուբեն Սաքապետոյանն առաջիններից մեկն էր, որ ձեռնամուխ եղավ արեւմտահայերենի, հատկապես նրա բառապաշարի ուսումնասիրության գործին: Այդ են վկայում նրա «Արեւմտահայերենի գործնական աշխատանքների եւ վարժությունների ձեռնարկը» (Յու. Ավետիսյանի համահեղինակությամբ, 1997 թ.), շուրջ 16000 բառ եւ դարձվածային միավոր պարունակող «Արեւմտահայերեն-արեւելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարանը» (2000թ), մի շարք հոդվածներն ու հրապարակումները եւ դոկտորական ատենախոսությունը, որը հրատարակվել է որպես մենագրություն՝ «Արեւելահայերենի եւ արեւմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» վերնագրով: Աշխատության մեջ առաջին անգամ հանգամանորեն քննվում ու լուսաբանվում են մեր լեզվի երկու ճյուղերի բառապաշարային հատկանիշները: Բառական նյութն իհարկե այս կամ այն չափով մինչ այդ ներկայացված էր տարբեր բառարաններում, որոնց թվում նաեւ հենց Ռ. Սաքապետոյանի՝ վերը նշված բառարանում: Տեսական տարբեր խնդիրներ էլ ուսումնասիրված էին, սակայն հարցն ամբողջությամբ քննված չէր, եւ շատ իրողություններ կարոտ էին հիմնավոր մեկնաբանության ու դասակարգումների:

«Արեւելահայերենի եւ արեւմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» աշխատության մեջ մանրամասնորեն վերլուծված ու ներկայացված են բառապաշարային այն նմանություններն ու առավելապես տարբերությունները, որոնք առկա են մեր լեզվի ճյուղերի միջեւ: Քննված են նաեւ հարակից հարցեր, մասնավորապես արտասանական, ուղղագրական, ուղղախոսական այն իրողությունները, որոնք սերտորեն առնչվում են բառապաշարին եւ առաջ բերում որոշակի յուրօրինակություններ:

Գրքի ներածական մասը նվիրված է պատմական եւ լեզվական հանգամանքներին, այսինքն՝ լեզվական եւ արտալեզվական գործոններին, ինչպես նաեւ հարցին վերաբերող տեսական գրականության քննությանը: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Ա. Այտընյանի, Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ջահուկյանի, էդ. Աղայանի, Ա. Սարգսյանի եւ այլոց կարծիքներին, վերլուծում դրանք եւ հավելում մի շարք նոր փաստեր, կատարում նոր դասակարգումներ: Գրքի այս բաժնում խոսվում է նաեւ այն սկզբունքների մասին, որոնցով գրված է մենագրությունը: Այնուհետեւ առաջին գլխում քննված են արեւելահայերեն-արեւմտահայերեն ուղղագրական-ուղղախոսական տարբերություններ ունեցող բառերը (օրինակ՝ հայելազարդ-հայելիազարդ, բջջային-բջիջային, իշուկ-էշուկ եւ այլն): Այսպիսի տարբերությունները կապվում են հնչյունական տարբեր երեւույթների, որոնք էլ համապատասխան օրինակներով հերթով ներկայացվում են: Երկրորդ գլխում քննվում են միայն արեւմտահայերենին բնորոշ բառերը: Այստեղ կատարված է մանրազնին ուսումնասիրություն, եւ բառերն առանձնացված են տարբեր խմբերի՝ կրոնական-եկեղեցական եւ ծիսական բառեր, ծիսական-ազգագրական իմաստներով բառեր, ընտանեկան հարաբերություններ անվանող բառեր, կրթական բնագավառի բառեր, պատմական արժեք ունեցող բառեր եւ այլն: Ընդհանուր առմամբ առանձնացված է տասնյոթ խումբ, որը, կարծում ենք, ցույց է տալիս, թե ինչ հանգամանորեն են դրանք ներկայացված: Ուշագրավ է, որ ոչ միայն առանձնացվում են այս խմբերը, ոչ միայն ներկայացվում են լեզվական յուրահատկությունները, այլեւ շատ դեպքերում նշվում են արտալեզվական գործոնները՝ պատմական, մշակութային, կենցաղային եւ մյուս այն իրողությունները, որոնք ազդեցություն են ունեցել այս հարցում: Երրորդ գլուխը կոչվում է «Միեւնույն բառածեւի արտահայտած տարբեր իմաստները արեւելահայերենում եւ արեւմտահայերենում»: Այստեղ բերված բառերն էական դեր ունեն երկու գրականները ճիշտ հասկանալու համար, օրինակ՝ ախոյան արեւելահայերենում նշանակում է հակառակորդ, արեւմտահայերենում՝ չեմպիոն, լաթ արեւելահայերենում նշանակում է փալաս, արեւմտահայերենում՝ զգեստ եւ այլն: Այսպիսի բառերի մի մասն ունի նաեւ խոսքիմասային տարբերություն, օրինակ՝ ազգային բառն արեւելահայերենում նշանակում է ազգին վերաբերող եւ ածական է, իսկ արեւմտահայերենում նշանակում է ազգային-քաղաքական գործիչ եւ գոյական է, գրագետ արեւելահայերենում նշանակում է գրաճանաչ եւ ածական է, իսկ արեւմտահայերենում նշանակում է գրականությամբ զբաղվող մարդ եւ գոյական է:

Չորրորդ գլխում ներկայացված են արեւելահայերեն-արեւմտահայերեն բառակազմական տարբերակները: Այս բառերը կազմված են բառակազմական տարբեր բաղադրիչներով կամ տարբեր կաղապարներով, ինչպես՝ ազգահամար-մարդահամար, անձնական-ինքնական, աչքառու-ակնառու, գրածախ-գրավաճառ եւ այլն (առաջինը գրված են արեւմտահայերեն բառերը): Հինգերորդ գլխում բերված են օտար բառերի դիմաց արեւմտահայերենում գոյություն ունեցող հայերեն բառերը, օրինակ՝ ակորդ-դաշնուրդ, դիվերսանտ-խափանարար, սպեկուլյանտ-շահադետ եւ այլն: Վեցերորդ գլխում քննված են բառարանագրությանը վերաբերող հարցեր, որոնք լուսաբանում են արեւելահայերենի եւ արեւմտահայերենի բառապաշարների արտացոլումը բառարաններում: Գրքի վերջում խոսվում է նաեւ արեւելահայերենի եւ արեւմտահայերենի մերձեցման խնդիրների մասին, ինչպես նաեւ բերվում են ընդարձակ բառացանկեր: Մեր լեզվի երկու գրական ճյուղերի մերձեցման հարցերի քննությունն այս գրքում կարեւորվում է նաեւ նրանով, որ մինչեւ այժմ եղած մերձեցումները եղել են հենց բառապաշարային մակարդակում: Այստեղ հեղինակը նշում է բառային տարբերակները, հաջող եւ անհաջող կազմությունները եւ գտնում, որ կան երկու գրականների փոխադարձ հարստացման լայն հեռանկարներ:

Աշխատության մեջ առաջ են քաշվել եւ իրենց լուծումն են ստացել մի շարք տեսական նորամուծություններ, որոնցից կարելի է նշել արեւելահայերեն-արեւմտահայերեն բառապաշարային տարբերությունների հստակ դասակարգումը, դրանց հետագա փոխհարստացման ուղիները, հնչյունափոխական մի շարք երեւույթներ՝

մասնավորապես ռ-ր հակադրության չեզոքացումը արեւմտահայերենի արտասանության պլանում, փոխազդեցական հնչյունափոխության հետեւանքով պարզ խուլերի առկայությունը որպես հնչույթային արժեք չներկայացնող միավորներ, ե հոդակապի առաջացման լրացուցիչ հիմնավորումները: Վերջապես, հսկայական քանակությամբ լեզվական նոր նյութ է դրվում շրջանառության մեջ, որով այս աշխատանքը կարող է դառնալ սկզբնաղբյուր հետագա ուսումնասիրությունների համար:

Ինչպես երեւում է գրքի այս մասնակի ներկայացումից, «Արեւելահայերենի եւ արեւմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» մենագրությունը մի ուշագրավ եւ արժեքավոր աշխատություն է: Արեւմտահայերենի գիտական ամեն մի ուսումնասիրություն կամ ուսումնական ձեռնարկ մի նոր քայլ է մեր լեզվի զարգացման ճանապարհին, նոր խթան եկող սերունդներին, որոնք պարտավոր են պահպանել ու հարստացնել եւ՛ արեւելահայերենը, եւ՛ արեւմտահայերենը: Այս առումով Ռ. Սաքապետոյանի աշխատություններն ունեն թե՛ գիտական, թե՛ ազգային, թե՛ մշակութային նշանակություն եւ մեծ չափով կօգնեն ոչ միայն լեզվաբաններին, այլեւ ուրիշ բնագավառների մասնագետներին, քանի որ նպաստում են բառապաշարների փոխհարստացմանը եւ կարող են օգտակար լինել տերմինաստեղծման աշխատանքներին:

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ Բ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ,
Հալէպ-Երեւան

Ես հայ եմ: Հայրենիքս Հայաստանն է: Ու թէեւ ես չունիմ իմ երկրիս անձնագիրը եւ քաղաքացին եմ այլ երկրի, բայց ամբողջ էութեամբս իմ երկրիս մէկ մասնիկն եմ, անով կ՛ապրիմ, անով կը շնչեմ: Անով հպարտանալու բազում պատճառներ ունիմ: Այդ պատճառները կու գան դարերու խորերէն:

Երկիրս սիրելը, անոր պատմութիւնը սերտելէ առաջ, եկած է ծնողներէս: Անոնք, ջարդի սերունդ, եկած են Տէր Զօրէն, բայց կրցած են գոյատեւել, ապրիլ, ծնունդ տալ ինծի, եւ իրենց զաւակներուն ներշնչած են հայրենասիրութիւն, սէր դէպի հայ գիրը եւ ինչ որ հայկական է:

Անոնք ապրած են աղքատ, բայց մեզի ցոյց տուած մեր հարստութեան ճամբան՝ հայ երկրի ճամբան, հայ մշակոյթի ճամբան:

Երկրորդ եւ խորագոյն պատճառը մեր հայրենասիրութեան եղած է հայ դպրոցը, մեր լեզուն, որուն շնորհիւ մենք վերահասու եղած ենք մեր ժողովուրդի պատմութեան, անոր անիմանալի գանձերուն, անոր պարտութիւններէն ետք յաղթանակի հասնելու ոգորումներուն, գոյատեւելու անասելի ուժին:

Հայ ուսուցի՛չը: Ես պաշտած եմ իմ ուսուցիչներս: Իմ մայրենի լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցիչներս մանաւանդ, որոնք ԱԲԳ-ի հրաշքին բանալէ ետքաչքերս, հայ գրական գոհարներու ոսկեհատ ցորենադաշտը պարզած են հոգիիս դէմ, զիս զինած Սասունցի Դաւթով, Զօրավար Վարդանով, Հացեկացիի ամենահայ Մեսրոպով, ըսելով ինծի, թէ պատմութիւնը կ՛ըլլայ յամառ, զայն կարելի չէ եղծանել, պատմութիւնը գրուած կ՛ըլլայ ադամանդեայ գրիչով, գրուած կ՛ըլլայ ոչ միայն հոգիներու մէջ, այլ նաեւ մեր երկրին՝ Հայաստանի ժայռերուն, հովիտներուն, բարձունքներուն վրայ, որպէս քարեղէն վկայակոթող:

Ես այդպէս ճանչցայ իմ երկիրս: Այդպէս ճանչցայ անոր ամբողջ պատմութիւնը, որ կու գայ խոր անցեալէն մինչեւ Սարդարապատ ու Առաջին հանրապետութիւն զոր ոչ թէ անհատներ, այլ մեր ամբողջ ժողովուրդը կերտեց իր շինականով, բահ ու բրիչով ու զօրավարով:

Ապա եկաւ Երկրորդ հանրապետութիւնը նոյեմբերի 29-ով: Անոնք, որոնք կը վիճին թուականի մասին, թող մի քանի օրերու ճշգրտութեան սիրոյն շարունակեն վիճիլ:

Եկաւ այդ հանրապետութիւնը եւ անոր գոյութիւնը շարունակուեցաւ ամբողջ եօթանասուն տարի:

Պատմութիւնը արձանագրեց այդ տարիները մեր հոգիներուն մէջ իր սեւով ու սպիտակով:

Այդ եօթանասուն տարիները արձանագրուեցան մեր միւնուճար երկրին հովիտներուն, բարձունքներուն ու ժայռերուն վրայ:

Ես բախտ ունեցայ ականատեսն ըլլալու եօթ տարիներու բաժինի մը, երբ 1963-1970 տարիներուն դարձայ ուսանող իմ երկրիս բարձրագոյն համալսարաններուն մէջ՝ հետեւելով թէ՛ հայագիտութեան, թե՛ բժշկագիտութեան:

Ուրեմն կրցայ դառնալ վկան իմ տեսածներուս յատկապէս եւ խօսքերուն, որոնք այլ հայերու ապրումները կուտային:

Կը յիշեմ արձակագիր Վախթանգ Անանեանի ըսած մէկ խօսքը ինծի անձնապէս.- Մենք ճահիճներու վրայ երկիր ստեղծեցինք, քարը հացի վերածեցինք, ես պարզ որսորդ մըն էի, այս երկիրը զիս վերածեց գրողի...

Կը յիշեմ տակաւին իմ մէկ գիտնական դասախօսիս մէկ խօսքը.- Թորոս, տղաս, զսպէ լեզուդ, որ փորձանքի չհանդիպիս: Այս երկիրը Սովետական Միութիւն է եւ ոչ թէ քու ուզածդ Հայաստանը:

Կը յիշեմ տակաւին տարիքը առած աղջիկի մը լացը, որուն սիրած տղան Սիբիրէն չէր վերադարձած:

Ասոնք ուրիշներու ըսածներն էին: Պատմութիւնը արձանագրած էր այդ բոլորը:

Պատմութիւնը արձանագրած էր նաեւ Խանջեանի, գանգրահեր այդ տղուն եղերական սպանութիւնը, ինչպէս կորչումը անկրկնելի Ակսել Բակունցին, որ ալպիական մանուշակն էր մեր գրականութեան:

Հապա Թոթովե՞նցը, Զապել Եսայեա՞նը, Չարե՞նցը ու ամբողջ փաղանգը մեր մշակոյթի հարստութեան մաս կազմող մտաւորականութե՞ն:

Պիտի գրուի անպայման եօթանասուն տարիներու ընթացքին Սիբիրի սառնամանիքները ճաշակողներուն թիւը, հայ գնդակահարեալներուն թիւը, որ անկասկած տասնեակ հազարներով պիտի համրուի:

Պատմութիւնը կը գրէ, որ հայրենասէր հայ չեկիստներ ալ եղած են, որոնք իրենց իսկ մահը աչք առնելով մահուան ճիրաններէն ազատած են բազմաթիւ հայորդիներ:

Պատմութիւնը յամառ տարեգիրն է մեր ժողովուրդին: Եւ ինչ որ եղած է այպանելի ու ծափահարելի, արձանագրած է որպէս իրաւ եղելութիւն:

Ու իմ ապրածս եօթ տարիներու ընթացքին ես անձնապէս ունեցած ու կրած եմ փաստացի տուեալներ, սեփական ապրումներուս մէջէն, որ հետապնդուած եմ: Նամակներս եղած են քննութեան առարկայ, հեռախօսս՝ քննութեան ենթակայ, օթեւանիս պատն ու դուռը՝ քննութեան ենթակայ:

Բայց այս երկրին մէջ վկայուած եմ բժիշկ, այս երկիրը զիս պահած է խանդավառ, զի սեփական աչքերուս առջեւ որպէս ամբաստանագիրը հանուր աշխարհի դէմ երկինք

խոյացած է Հայոց եղեռնի յուշարձանը Ծիծեռնակաբերդի բարձունքին:
Իմ աչքերուս առջեւ հայոց լեռներու կարծր կուրծքը ճեղքելով Արփան միացած է Սեւանին:
Իմ աչքերուս առջեւ Երկրորդ հանրապետութիւնը հայոց կոթողած է Սարդարապատի յուշահամալիրը:
Իմ աչքերուս առջեւ նոյն այս հանրապետութիւնը Երեւանը վերածած է մեթրօ ունեցող քաղաքի, երբ տարիներ առաջ արդէն ծնունդ տուած էր Ս. Մեսրոպին անունը կրող հայ մշակոյթի ադամանդեայ պահարան Մատենադարանի:
Զորս ասեմ եւ զորս խոստովանիմ...
Երեւանը երեք տասնեակ հազարանոց աւան մըն է: Բ. հանրապետութեան օրով, բոլորիս աչքերուն առջեւ վերածուեցաւ միլիոնանոց քաղաքի, ապրեցաւ թռիչքային կեանք, ծնունդ տուաւ համալսարաններու, գիտական օջախներու, Վիկտոր Համբարձումեանը կապոյտ երկինքի անլուծելի կարգ մը հարցերը կարդաց ու վերծանեց, Բաղդադ ծնած եւ քալելով Հայաստան եկած Գուրզադեաններու զաւակը՝ ակադեմիկոս Գրիգոր Գուրզադեանը իր գործակիցներով Բ. հանրապետութեան մէջ՝ ի Գառնի, Օրիոն-2 կոչուող տիեզերանաւը պատրաստեց մեծագոյն աջակցութեամբը Մոսկուայի:
Մեր երկիրը դարձաւ համակ գրագիտութեան երկիր:
Մեր մշակոյթը ունեցաւ իր նոր ոսկեդարը, իր Աճառեանով, իր Փափազեանով, Ալիխանեանով, Մահարիով, Պարոյր Սեւակով, Հրանտ Մաթեւոսեանով, Սարեանով եւ բազում տաղանդաշատ մարդոցմով:
Անհաւատալի այլ երեւոյթ: Պատմութիւնը արձանագրեց, որ Հայաստանը դարձաւ 3.700.000 բնակիչ ունեցող երկիր:
Պատմութեան ամբողջ տեւողութեան ընթացքին երբեւիցէ այս հողակտորը չէր ունեցած այսքան բնակիչ:
Երկաթէ վարագոյր կոչուեցաւ այս երկիրը: Վարագոյրի ետին հրաշքներ գործուեցան ոճիրներու կարգին: Դուրս գալը արգիլուած էր: Երկիրը թիւ կազմեց: Աշխատեցաւ: Սիբիրը չկրցաւ արգիլել հայրենասիրութիւնը, որ մնաց բոցարծարծ:
Հիմա փակուած է պատմութեան այդ էջը, երբ Բ. հանրապետութեան օրերուն տաղանդաշատ բազում հայեր աշխարհի տարբեր երկիրներէն հայրենիք եկան առանց նկատի առնելու, թէ ինչ ղեկավարներ պիտի ունենան, եկա՛ն, երկիրը կառուցելու:
Հիմա, մեկնած է Բ. Հանրապետութիւնը պատմութեան յանձնելու իր սեւ ու սպիտակ էջերը:
Եկած է Գ. Հանրապետութիւնը ոգեշնչուած տղոց ձեռքով:
Պատմութիւնը սկսած է արձանագրել Գ. հանրապետութեան տարիները արդէն ըսելով.- Մկ միլիոնէ աւելի հայորդիներ լքած են իրենց հայրենիքը:
Նմանը չունեցող երեւոյթ:
Նոյեմբերով կեանքի կոչուած Բ. հանրապետութիւն, դուն պիտի յիշուիս քու սեւովդ ու սպիտակովդ:
Պատմութիւնը պիտի շարունակէ իր յամառ ընթացքը:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ՀԱՄԱՐՁԱԿՎԻ ՃԱՆԱՉԵԼ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ»

Հայաստանի նախագահը սլովենական «Դելո» թերթում հրապարակված հարցազրույցում ասել է, որ «եթե բանակցություններն սպառեն իրենց, չտալով որեւէ արդյունք, ես չեմ բացառում ԼՂՀ ճանաչումը Հայաստանի կողմից կամ վերամիավորումը Հայաստանին»: Ըստ «Մեդիամաքսի», Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ Հայաստանը ԼՂՀ-ն փաստացի ճանաչել է վաղուց՝ Ղարաբաղում օգտագործվում է հայկական դրամը, գործում է միասնական մաքսային գոտի եւ այլն: «Ընթանում է ինտեգրացիոն լուրջ գործընթաց, եւ Հայաստանի ու ԼՂՀ հարաբերությունները կարելի է բնութագրել որպես անհամաչափ համադաշնություն»:
Բաքուն առայժմ քաղաքագետների մակարդակով է արձագանքել Հայաստանի նախագահի մեկնաբանություններին: «Հայաստանը չի համարձակվի ճանաչել Ղարաբաղի անկախությունը», ասել է Ադրբեջանի նախագահի նախկին խորհրդական Վաֆա Գուլուզադեն, հավելելով, որ նման հայտարարությամբ Քոչարյանը մտադիր է ճնշում բանեցնել Ադրբեջանի վրա: Ադրբեջանցի քաղաքագետ Այդին Միրզազադեն ասել է, որ եթե Հայաստանը ցանկանար, ապա կճանաչեր Ղարաբաղի անկախությունը: Նա նշել է, որ Քոչարյանի հայտարարությունը մի քանի օր կքննարկվի մամուլում, այնուհետեւ կմոռացվի, քանի որ «անլուրջ եւ անտրամաբանական է»:

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՀԱՏՈՒԿ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏԵՑ ԿԱՐՍ-ԳՅՈՒՄՐԻ-ԹԲԻԼԻՍԻ-ԲԱՔՈՒ ԵՐԿԱԹԳԾԻ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը դարձավ նախագահող երկիր
Ալբանիայի մայրաքաղաք Տիրանան սեւծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) խորհրդարանական վեհաժողովի հայ պատվիրակներին դիմավորեց մռայլ ու անձրեւոտ եղանակով: Մինչեւ վերադարձ եղանակն այդպես էլ չպարզվեց՝ էլ ավելի աննպաստ դարձնելով աղքատիկ հրապույրներով քաղաքից ստացած տպավորությունը: Ալբանիան բոլոր մանրամասներով կրում է իսլամական արեւելքի երանգները: Ինչ-որ տեսանկյունից այս երկիրը կարելի է համարել Եվրոպայի գավառը, ուր ժամանակակից կյանքի հազիվ ընկալելի շնչառության կողքին ասիական կենցաղի անմշակ, կոպիտ ներկայությունն է զգացվում: Քարուքանդ ճանապարհներ, մաշված ու դարն ապրած շենքեր, ցեխի ու ջրի մեջ ճողփացող փողոցներ, հենց քաղաքի կենտրոնում անկարգ ու անկառավարելի երթեւեկ:
Ալբանիայի 3,5 մլն բնակչության 90 տոկոսն ալբաններ են, մնացածները՝ սերբեր, մակեդոնացիներ, բուլղարներ, գնչուներ: Պետության գլուխ կանգնած է նախագահը: Մանր ու մեծ գրպանահատություն, մեծ ու փոքր հանցագործ խմբավորումներ, կրակակետեր Կոսովոյի սահմանային գծի վրա, զենք ու զինամթերք բնակչության ձեռքին, հաճախակի հնչող կրակոցներ նույնիսկ օրը ցերեկով. ահա այսպիսի քաղաքում սեւծովյան տարածաշրջանի 12 պետությունների մասնակցությամբ ՍԾՏՀ խորհրդարանական վեհաժողովը սկսեց իր 26-րդ նիստը:
Իբրեւ տարածաշրջանի համար ամենացավոտ ու դրամատիկ թեմա առաջինը քննարկվեց միգրացիայի պրոբլեմը: Տարածաշրջանում բնակչության կամավոր ու հարկադիր տեղաշարժերն այնքան են ակտիվացել, որ ժողովրդագրական լուրջ փոփոխություններ են առաջացրել գրեթե բոլոր երկրներում: Հենց Ալբանիայում բնակչության երեք քառորդի ակտիվ արտահոսք է արձանագրվում: Ազգային պատվիրակությունների ղեկավարներն իրենց ելույթներում ընդգծեցին, որ սեւծովյան երկրները պետք է միասնական լինեն միգրացիայի հետեւանքով առաջացած թրաֆիքինգի,

մարդկանց առեւտրի, զենք ու զինամթերքի տեղաշարժի եւ այլ իրողությունների դեմ պայքարում:

Ելույթ ունեցավ նաեւ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը: Անկախության հռչակումից հետո միգրացիան լուրջ գլխացավանք դարձավ Հայաստանի համար՝ հարկադրելով իշխանություններին ստեղծել միջամտության այնպիսի մեխանիզմներ, որոնց առկայությամբ փախստականների, միգրանտների շահերը գոնե չեն հակադրվի ազգային շահերին: Արթուր Բաղդասարյանն ընդգծեց միջազգային կառույցների ակտիվ միջամտության անհրաժեշտությունը՝ միգրանտների տեղաշարժերի ծագման ու զարգացման բոլոր փուլերում: Ավարտելով խոսքը նա ասաց. «Ցանկանում ենք, թե ոչ, միգրանցիան միշտ եղել է եւ կլինի՝ իր դրական ու բացասական բոլոր հետեւանքներով: Մեր պարտքն է համատեղ ջանքերով մեղմել այդ գործընթացի բացասական հետեւանքները եւ ձգտել, որ այն միջպետական լարվածության աղբյուրից վերածվի բոլորին միավորող գործոնի»:

Սեւծովյան տարածաշրջանի երկրների ներդաշնակ զարգացմանը խոչընդոտող մյուս խնդիրը տրանսպորտային ենթակառուցվածքների վիճակն է: Այն հատկապես Հայաստանի համար կենսական նշանակություն ունի: Խոսքը վերաբերում է Կարս-Գյումրի-Թբիլիսի-Բաքու երկաթգծի վերաբացման անհրաժեշտությանը: Նախորդ՝ սեւծովյան վեհաժողովի քիշնեւյան կոմիտեի նիստում հայ պատվիրակներին հաջողվել էր հիմնական փաստաթղթում եւ դրա հանձնարարականներում ներկայացնել խնդիրը: Հենց այդ փաստաթուղթը դրվեց քննարկման վեհաժողովի 26-րդ նիստում եւ ամրագրվեց ու հաստատվեց հատուկ որոշմամբ: Դա նշանակում է, որ ներկայացուցչական որեւէ այլ մարմին՝ լինի Եվրոմիությունը, Եվրոխորհուրդը, թե ԵԱՀԿ-ն, այլեւս չի կարող անտեսել պրոբլեմի լուծման վեհաժողովի արդեն հաստատած տարբերակը:

Երկաթուղով տարեկան պիտի իրականացվեն միլիոնավոր տոննաների բեռնափոխադրումներ: Ըստ փաստաթղթի, սկզբնական շրջանում երկաթուղով տարեկան պետք է անցնի 3 մլն տոննա բեռ: Հետագայում հզորությունն աստիճանաբար կհասնի 5-8 մլն տոննայի: Դա Հայաստանի համար նշանակում է ե՛ւ ֆինանսական, ե՛ւ քաղաքական ազդեցության մեծացում, քանի որ նրա դերը իբրեւ տարանցիկ երկրի էապես կփոխվի: Սեւծովյան տնտեսական համագործակցության վեհաժողովի գործունեության հիմնական սկզբունքը տարածաշրջանի կայուն եւ երկարատեւ զարգացումն է, նոր բաժանարար գծերի բացառումը: Հենց այս տրամաբանությամբ վեհաժողովն իր հովանավորության տակ առավ Կարս-Գյումրի-Թբիլիսի-Բաքու երկաթուղու վերագործարկումը:

Քիշնեւյան փաստաթուղթը վեհաժողովում քննարկվեց նոր՝ Հայաստանի համար ավելի բարենպաստ տարբերակով: Հայ պատվիրակները հընթացս առաջ քաշեցին նաեւ աբխազական երկաթուղու վերաբացման խնդիրը, ինչը հարուցեց վրացական կողմի լուրջ դիմադրությունը: Վրացիները պնդեցին, որ հարցի լուծումը կապվում է փախստականների խնդրին եւ անիմաստ է քննարկել նստաշրջանի ընթացքում:

Վեհաժողովի աշխատանքներին Ադրբեջանը չէր մասնակցում, խնդրի արագ լուծման համար այդ հանգամանքը թերեւս դրական նշանակություն ունեցավ: Բոլոր պատվիրակները միաձայն քվեարկեցին՝ անսահման ուրախություն պատճառելով հայկական պատվիրակությանը: Կողմ քվեարկեց նաեւ Թուրքիան:

Հիշեցնենք, որ երկաթգիծն ավելի քան 12 տարի չի գործում Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման պատճառով: Իր ընդարձակ ելույթում ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը հատուկ շեշտադրությամբ նշեց, որ երկաթգծի վերագործարկումը կարեւոր է ոչ միայն տարածաշրջանի երկրների տնտեսական համագործակցությունը խթանելու, այլեւ առկա կոնֆլիկտների կարգավորման տեսանկյունից:

Հայաստանի համար մյուս նշանակալից իրադարձությունը 6-ամսյա ժամկետով ՍԾՏՀ խորհրդարանական վեհաժողովի նախագահության հանձնումն էր Հայաստանին:

Խորհրդարանական վեհաժողովի հաջորդ նիստը կկայանա Երեւանում 2006 թ. հունիսին: Ի դեպ, հատկապես հայկական պատվիրակության այցը լայնորեն լուսաբանվեց ալբանական հեռուստաալիքներով:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՐՋ ՆԵՐԴՐՈՒՄ Է ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Դա գործնական նշանակություն ունի նաեւ ցեղասպանության ժառանգներին փոխհատուցելու համար

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը շարունակում է ծավալվել: Զուգընթաց դրան, ինքնաբերաբար օրակարգ է մտնում ցեղասպանության հետեւանքների վերացման հարցը: Դրա լուծումն, ինչ խոսք, չափազանց բարդ հարց է: Սակայն, որքան էլ բարդ լինի, այդ ուղղությամբ որոշակի քայլեր արդեն կատարվում են: Ցեղասպանության ժառանգներին ապահովագրական վկայականների դիմաց վճարվող փոխհատուցումը դառնում է դրանց առանձնահատկությունը:

Ինչպես հայտնի է, ամերիկյան «Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերությունը համաձայնել էր 20 մլն դոլար փոխհատուցում վճարել ցեղասպանության ժառանգներին: Ամերիկյան ընկերության օրինակին է հետեւել ֆրանսիական «Աքսան», որը պատրաստվում է վճարել 17 մլն դոլար: Այդ ընթացքում ցեղասպանության ժառանգները փոխհատուցման պահանջով դատական հայց են ներկայացնում գերմանական «Դոյչեբանկի» դեմ: Ակնհայտ է, որ միջազգային ասպարեզում ցեղասպանության ճանաչումը դրա հետեւանքների վերացման գլխավոր նախապայմանն է: Ինչ վերաբերում է ցեղասպանության ժառանգներին փոխհատուցում վճարելու ապահովագրական միջազգային

ընկերությունների պատրաստակամությանը, ապա դա էլ տարբեր երկրների խորհրդարաններում ընդունված ճանաչման որոշումներն ամրագրելիս միաժամանակ դառնում է հետեւանքների վերացման նախապայման:
Այլ կերպ, եթե փոխհատուցումը կարեւոր է ինչպես ցեղասպանության ճանաչման որոշումներն ամրագրելու, այնպես էլ հետեւանքների վերացման համար, ապա փոխհատուցման համար էլ կարեւոր պետք է համարվի հայ ժողովրդի նյութական կորուստները հաստատող փաստաթղթերի հրապարակումը:
Թերեւս այդ առումով լուրջ ներդրում է Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի առթիվ «Ես մեղադրում եմ. գործ թիվ 1.500 000» վերնագրով 2005 թ. Երեւանում ռուսերեն հրատարակված փաստաթղթերի ժողովածուն:
Վարուժան եւ Ժուլիեթ Սալաթյանների, նրանց որդիներ Արամի եւ Հայկի մեկենասությամբ «Մուղնի» հրատարակչությունում հրատարակված ժողովածուն կազմել է Սոնյա Միրզոյանը: 543 էջանոց այս ժողովածուն ունի հայերեն եւ ռուսերեն նախաբան, հավելված, ինչպես նաեւ անվանացանկ: Ժողովածուում ընդգրկված են ՀՀ ազգային արխիվում պահպանվող 511 վկայականներ: Դրանց զգալի մասը դեռեւս 1918 թ. Հովհաննես Թումանյանի անմիջական նախաձեռնությամբ Անտանտի տերությունների խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար հավաքել էր Առաջին աշխարհամարտի ընթացքում մեր ժողովրդի կրած վնասների չափն ուսումնասիրող բյուրոն:
Վկայականները պարունակում են տուժողի բնակության, կոտորածի երբ, որտեղ եւ ում կողմից իրականացման, շարժական եւ անշարժ գույքային ինչպես քանակական, այնպես էլ գումարային առումներով կորուստների եւ ընտանիքի անդամների մասին ճշգրիտ տվյալներ: Հրապարակվող փաստաթղթերի շրջանակը սահմանափակվում է Վանի, Բիթլիսի, Էրզրումի, մասամբ Խարբերդի վիլայեթներով, իսկ իրադարձությունների ժամանակագրությունը՝ հիմնականում 1914-15 թթ.: Վկայականները հրապարակվել են ռուսերեն բնագրով, բոլորն անխտիր ձեռագրից են:
Ժողովածուի փաստաթղթերը կարող են որպես փաստավավերագրական նյութ օգտագործվել Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրելիս: Սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի հրատարակած փաստաթղթերի վերոհիշյալ ժողովածուն ցեղասպանության ժառանգների համար ունեցած փոխհատուցման գործնական նշանակությունից բացի ունի նաեւ պատմագիտական մեծ նշանակություն:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Հայաստանի եւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիաների միջեւ կստորագրվի հետագա համագործակցության հուշագիր

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայ-ռուսական գիտական համագործակցությունը չի ընդհատվել նույնիսկ դժվարագույն 1990-ական թթ-ին: Դրա միակ պատճառն այն է, որ Հայաստանում գիտության զարգացումը շատ բարձր մակարդակի վրա է, որը մեծապես գնահատվում է Ռուսաստանում: Այդ մասին այսօր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում հայտարարեց ՌԴ գիտությունների ակադեմիայի փոխնախագահ Նիկոլայ Պլատեն՝ ավելացնելով, որ հետագայում էլ այդ փոխգործակցությունը շարունակելու է զարգանալ եւ նոր ոլորտներ ընդգրկել: Դեկտեմբերի 3-ին գիտական երկու կառույցների միջեւ կստորագրվի հետագա համագործակցության հուշագիր: Իսկ այսօր գիտնականները քննարկում են ավելի քան 65 կոնկրետ ծրագիր արծարծող թեմաներ, որոնք ընդգրկում են բնագիտական, տեխնիկական գիտական ուղղությունները:
Ն. Պլատեի խոսքերով՝ ակադեմիաների գերազանց գործընկերային հարաբերություններին խանգարում է միայն ֆինանսական միջոցների անբավարարությունը: Նա հույս հայտնեց, որ հանդիպումներն ու քննարկումները կուղղվեն փորձի փոխանակմանը, որի համար երկկողմ մեծ ներուժ կա: Պատմաբաններն արդեն երկու երկրների պատմական քաղաքական, տնտեսական եւ մշակութային առնչությունների վերաբերյալ կլոր սեղան են անցկացրել այսօր՝ առավոտյան: Իսկ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ հանդիպումից Ն. Պլատեն ոգեւորված է, քանի որ ՀՀ վարչապետն աջակցությունն է հայտնել թե գիտության զարգացմանը Հայաստանում, թե երկկողմ գիտական կապերի ամրապնդմանը:
ՀՀ ԳԱ ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը նշեց, որ նման հանդիպումներից մեծ օգուտներ են ակնկալվում գիտության զարգացման համար, քանի որ նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ գիտական ամենամեծ ձեռքբերումներին կարելի է հասնել փոխգործակցության միջոցով: ՌԴ գիտությունների ազգային ակադեմիան ներկայացնում են 11 պատվիրակներ:

Մշակույթ

Բալիկիս

Մարդ կեանքի մեջ , մայր իմ բարի,
Ինչ կարող է խնդրել Աստծուց.
Բացի արողջ բարի զավակ,
Որ ժպտում է նա ծնվելուց:

Հիմա ունեմ ես մի զավակ,
Մի աղջիկ որ ժպտում է քեզ.
Իմ կյանքում ինձ լինի հենակ,
Փարք Աստծու որ նա տվէց մեզ:

Դու իմ կյանքի մատանումը,
Ընտանիքիս փայլուն ակ ես.
Էդ պատճառով քո անունը ,
Մարգարիտ եմ անվանում ես:

Դու ծնվեցիր այն օրը ջինջ ,
Որ հայրիկտ էր քեզ սպասում.
Իր երգերի պատմության մեջ ,
Արաջինն էր նա ստեղծում :

Սերժիկ Յ.Ջ.
28 Օգոստոս, 2005
Թեհրան , Իրան